ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ԵՎ ԷՆՎԵՐ ՓԱՇԱՆ

Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Վերջին տարիներին ստեղծված բարենպաստ պայմանները հայ պատմաբաններին հնարավորություն են տալիս քննական հայացքով անդրադառնալու Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության այն սկզբունքային հարցերին, որոնք տասնամյակների ընթացքում լռության էին մատնվել, շրջանցվել, իսկ հաճախ՝ աղավաղվել կամ գլխիվայր ներկայացվել։

Նման սկզբունքային, առավել կարևոր հարցերի շարքում առանձնանում են Հոկտեմբերյան հեղափոխությունից և, հատկապես, Հայաստանի Հանրապետության հռչակումից մինչև նրա անկումն ընկած ժամանակաշրջանի պատմության մի շարք կնճռոտ հարցեր։

Հայ-խորհրդային հարաբերություններում նշված ժամանակաշրջանում կարևոր գործոն է եղել Հայաստանի Հանրապետության վերաբերմունքը Խորհրդային Ռուսաստանի հանդեպ, իսկ վերջինիս հոգսն է եղել արագացնել Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած գաղափարների տարածումն ու հաղթանակը ամենուրեք՝ սկսած Ռուսաստանին սահմանակից ծայրամասային նորասաղմ պետություններից և վերջացրած Եվրոպական խոշոր երկրներով, իսկ այնուհետև՝ աշխարհով մեկ։

Ի՞նչ դեր կարող էր խաղալ Հայաստանի Հանրապետությունն այդ ֆանտաստիկ առաքելության իրականացման գործում։ Պարզ է, որ բացասական, բանի որ հայկական նոր պետությունը չէր ընդունում բոլշևիկյան համայնավար դաղափարախոսությունը։ Եթե սրան ավելացնենք կրոնական գործոնը, որն այն տարիներին չափազանց ղորեղ էր, և որը խաղի մեջ մտավ (1917 թ. դեկտեմբերի 3-ի) «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին» հայտնի դիմումով, ապա առավել պարզ կդառնա, թե ո՞ւմ պիտի նախապատվություն տար Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը, քեմալական Թուրքիայի՞ն, որը կռվում էր նրա գլխավոր թշնամի Անտանտի դեմ, և որը դիտվում էր, որպես հենակետ՝ ռուսական հեղափոխությունը ողջ մահմեդական Արևելքում տարածելու հույժ կարևոր խնդրում, թե՞ դաշնակցական Հայաստանին (ինչպես հորջորջվում էր Հայաստանի Հանրապետությունը), որը դեռ հույսեր էր կապում Խորհրդային Ռուսաստանի թշնամի Անտանտի հետ։

Բոլշևիկյան հեղափոխության արտահանման ձգտումը ստիպում էր շտապեցնել այդ նպատակին հասնելու միջոցները, դրան ծառայեցնելու անգամ քաղաքականապես վարկաբեկված բախտախնդիրներին և հանցագործներին։ Բերենք մի քանի փաստ նման գործիչներից մեկի՝ Թուրքիայի բախտի նախկին տնօրեն Էնվեր փաշայի հետ համագործակցության վերաբերյալ։ Այդ համագործակցության փորձերն իրականացվում էին հիմնականում երկու ճանապարհով, անմիջականորեն՝ խորհրդային կառավարության ներկայացուցիչների, և անուղղակի՝ Կրեմլից ղեկավարվող Կոմունիստական Ինտերնացիոնալի միջոցով։

Էնվերի հետ կապ հաստատվել է 1919 թ. աշնանը՝ Բեռլինում, բանտից նոր ազատված Կառլ Ռադեկի միջոցով։ Մինչ այդ, նույն թվականի ապրիլին Էնվերը երեք անգամ փորձել էր հասնել Մոսկվա՝ ինքնաթիռով կտրելով խորհրդա-լեհական սահմանը, սակայն այդ փորձերը ձախողվել էին։ Դրանից հետո է, որ Էնվերը կապի մեջ է մտնում Կոմունիստական Ինտերնացիոնալի ներկայացուցիչ Կառլ Ռադեկի՝ իր «բոլշևիկ բարեկամի հետ», ինչպես նրան ան-

վանում էր Էնվերը դեկտեմբերին Ջեմալ փաշային ուղարկած նամակում, որտեղ նա հայտնում էր հետևյալը.

«Մեր բոլշևիկ բարեկամը դուրս է եկել բանտից... Այստեղ մեր բոլշևիկ բարեկամները համաձայն են մեզ օգնելու այն դաղափարների շրջանակներում, որոնք մենք քննարկեցինք բանակցությունների ընթացքում։ Այս պահին ահա իմ դիրքորոշումը հիմնական գծերով.

1. Ազատագրել մահմեդական ազգերին։

2. Նկատի ունենալով, որ իմպերիալիստական կապիտալիզմը մեր ընդհանուր թշնամին է, համագործակցել սոցիալիստների հետ։

3. Ընդունել սոցիալիզմի սկզբունքները պայմանով, որ դա հարմարեցվի մահմեդական այն վարդապետություններին, որոնք կառավարում են մահմեդական երկրների ներքին կյանքն ու գործունեությունը»[1]։

Էնվերը մտադիր էր «ԻԹԹիհատը» վերակառուցել նոր հիմքի վրա և իր ընկերներին համոզել իրենց նստատեղին տեղափոխել Խորհրդային Ռուսաստան՝ ի տարբերություն Թալաաթի, որը ցանկանում էր կենտրոնը դարձել Բեռլինը՝ Անատոլիայի ազգային շարժմանը քաղաքականապես ու տնտեսապես օգնելու համար։ Բոլոր դեպքերում ԻԹԹիհատականները համաձայն էին նպաստելու քեմալականների ու բոլշևիկների միջև հարաբերությունների զարգացմանը և Մոսկվա-Անկարա առանցքի ստեղծմանը։ Դա հաստատվում է Մուստաֆա Քեմալին ուղղված Էնվերի նամակներով, ուր խոսվում է նաև բոլշևիկների կողմից Էնվերին ցույց տրված դրամական և այլ կարգի նյութական օգնության մասին։

Էնվերի թուրք կենսագիրներից մեկը նույնիսկ մեջ է բերում մի փաստաթուղթ՝ 1921 թ. հունվար ամսվա համար Մոսկվայում Էնվերի ստացած և արտասահման ուղարկած գումարների բաշխման մասին։ Ահա փաստաթուղթն ամբողջությամբ։

«Բեռլինի կենտրոնին դոտացիա՝ 10.000 մարկ,
Ջեմալ Աղմի բեյին՝ 6.000 մարկ,
Թալաաթ փաշային՝ 10.000 մարկ,
Աղմի բեյին՝ 6.000 մարկ,
Նախկին ռազմական մինիստր Ռուսուհի բեյին՝ 6.000 մարկ,
Բահա Բեյին (Բեհաէդդին Շաքիրին)՝ 6.000 մարկ,
Իլիաս բեյին՝ 6.000 մարկ,
Սեքիզ Արսլան բեյին՝ 2.500 մարկ,
Ստամբուլ ուղարկելու համար՝ 14.000 մարկ,
Թևֆիքին՝ 15.000 մարկ,
Ջեմալ փաշային՝ 6.000 մարկ,
Բեդբի բեյին (Կ. Պոլսի ոստիկանության նախկին պետ)՝ 6.000 մարկ,
Զիա բեյին՝ 6.000 մարկ,
Ընդամենը 115.500 մարկ»[2]։

Ինչպես տեսնում ենք, նպաստ-օգնության ցուցակում են թուրքական ռազմական ատյանի 1919 թ. հուլիսի 5-ի որոշմամբ հեռակա կարգով մահվան դատապարտված ԻԹԹիհատական հանցագործներ Թալաաթը, Ջեմալը, Բեհաէդդին Շաքիրը և Տրապիզոնի հայերի դահիճ Ջեմալ Աղմի բեյը։ Ինչ վերաբերում է Էնվերին տրված դրամական օգնությանը, ապա նա իր նամակներում գրում է, որ ինքը Մոսկվայում ստացած գումարներից իր համար առանձնացրել էր (Մոսկվայում եղած ժամանակ) 10 ոսկի[3]։

Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ Մոսկվայում Էնվերին տրամադրել էին մի շքեղ, կրեմլահայաց բնակարան, որտեղ Էնվերից առաջ հյուրըն-

---

[1] Jacques Dérogy, Opération Nemesis, Paris, 1986, p. 260; Şevket Süreyya Aydemir, Makedonya' dan'Ortaasya'ya Enver Paşa. Üçüncü cilt, Istanbul, 1972, s. 520.

[2] Ş. S. Aydemir, նշվ. աշխ., էջ 550–551։

[3] Նույն տեղում, էջ 551։

կալվել էին Հալիլ բեյն ու Ջեմալ փաշան։ Կրեմլի դիմաց, Մոսկվա գետի ափին գտնվող այդ տունն ըստ էության, «մի մեծ առանձնատուն էր կամ փոքրիկ պալատ»[4]—գրում է Էնվերի կենսագիր Շևքեթ Սյուրեյյան, ավելացնելով, որ Չիչերինի հետ հանդիպելուց առաջ այդտեղ կայացել էր մի հավաք՝ Ռադեկի, Վոզնեսենսկու, Ջեմալ փաշայի ու Հալիլ բեյի մասնակցությամբ[5]։ «Մենք բոլորս, ինչպես Անատոլիայի հեղափոխական կառավարության, այնպես էլ մեր ընկերների անունից, եկել ենք առաջարկելու դաշինք Ռուսաստանի կառավարության հետ»—ասել էր Ջեմալ փաշան։

Էնվերի, Ջեմալ փաշայի ու երիտթուրքական մյուս ղեկավարների հետ հաստատված կապերի ու համագործակցության հարցը, մեր կարծիքով, առանձին ուսումնասիրության նյութ կարող է դառնալ, ուստի կանգ առնենք Էնվերի գործունեության վրա՝ Արևելքի ժողովուրդների համագումարի կազմակերպությամբ։ 1920 թ. օգոստոսի 14-ին Էնվերը ժամանում է Մոսկվա։ Այդ ժամանակ Կոմինտերնի կողմից արդեն ընդունվել էր որոշում՝ սեպտեմբերին Բաքվում անցկացնելու Արևելքի ճնշված ժողովուրդների առաջին համագումարը, որին մասնակցելու էր Էնվերը։ Վերջինս օգոստոսի 26-ին Մուստաֆա Քեմալ փաշային դրած նամակում բացատրում էր բոլշևիկների կողմից նրան ցույց տրվող օգնության ու առաջարկության շարժառիթները. «Ես եկել եմ այստեղ (Մոսկվա—Ռ. Ս.) ստեղծելու համար իսլամական մի կազմակերպություն, որն ընդունակ լինի օգնության գալու մեր երկրին։ Խորհրդային ղեկավարները, որոնց ես հանդիպեցի, հավանություն են տալիս իմ նախագծին։ Սկզբունքորեն ռուսները համաձայն են պաշտպանելու անգլիացիների դեմ ուղղված հեղափոխական շարժումները, եթե նույնիսկ այդ շարժումները դիտվում են որպես ոչ-կոմունիստական»[7]։

Եվ այսպես, 1920 թ. օգոստոսի վերջին բոլոր տիտղոսներից զրկված (գեներալիսիմուսի, փաշայի և այլն), Թուրքիան համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու, զանազան խարդախությունների, ինչպես նաև հայկական ջարդերի համար մահվան դատապարտված Էնվերը ժամանում է Բաքու, հատուկ վագոնով՝ չեկիստների ուղեկցությամբ, որոնք պետք է նրան պաշտպանեին ժողովրդական վրիժառուների հնարավոր ահաբեկչությունից և միաժամանակ հսկեին՝ նկատի ունենալով, որ մի քանի հեղափոխական գործիչներ, որոնց թվում Հնդկաստանի ներկայացուցիչ Ռոյը՝ «կասկածի տակ էին առել Էնվերի մաքրությունն ու նրա նպատակների լոյալությունը»[8]։

Հարկ չկա անդրադառնալու Բաքվի համագումար հրավիրված Էնվերի հայտարարություններին, նրա հավակնությանը՝ համագումարում ներկայացնելու Արևելքի 34 ճնշված ու կեղեքված ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին։ Առավել կարևոր է այն հարցը, թե Կոմինտերնի ղեկավարներ Ս. Զինովևը, Կ. Ռադեկը և մյուսները բարոյական ի՞նչ չափանիշներով և ի՞նչ նորմերով էին առաջնորդվում՝ հարաբերությունների մեջ մտնելով և կապեր հաստատելով մի ամբողջ ժողովրդի դահճի հետ, որն իր իսկ երկրի դատարանի կողմից դատապարտված էր մահվան։

Եվ պատահական չէ, որ բոլշևիկյան ղեկավարների հետ քաղաքական բախտախնդիր Էնվերի կապերը քննարկման առարկա են դարձել Ֆրանսիայի Տուր քաղաքում 1920 թ. դեկտեմբերին կայացած սոցիալիստական կուսակցության XVIII համագումարում։ Իսկ եվրոպական սոցիալիստական շարժման առաջնորդներից մեկը՝ ժան Լոնգեն, իր ռուս ընկերներին կշտամբում էր

---

4 Նույն տեղում, էջ 563։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում։

7 J. Déroy, Նշվ. աշխ., էջ 282։

8 Նույն տեղում։ Մանրամասն տե՛ս Paul Dumont, La fascination du bolchévisme. Enver Pacha et le parti des Soviets populaires. („Cahiers du monde russe et soviétique". Paris, avril-juin 1975).

«օպորտունիստական դիրքորոշման համար, մինչդեռ նրանք ուրիշ դեպքերում հանդես են բերում կոպիտ անհանդուրժողականություն»[9]։ Մասնավորապես, նա ուղղակի հայտարարեց, որ դա հենց այն էնվեր փաշան էր, որի ձեռքերի վրա կա մեկ միլիոն հայերի արյուն։ «Որոշակի է,— շարունակեց նա,— որ էնվեր փաշան կանգնած էր այն քաղաքականության ղեկին, որն ավարտվեց մեկ միլիոն հայերի ոչնչացմամբ»[10]։ Խոսելով ռուսական հեղափոխությունը ժամ առաջ Արևմուտքում տարածելու բոլշևիկների փորձերի մասին, Ժ. Լոնդեն նշեց հետևյալը. «Ես ասացի Ա. Զինովևին. «Ինչպիսի՞ն է, այնուամենայնիվ, հեղափոխական այն ջերմաչափը, որը ձեզ թույլ է տալիս Կրեմլից չափել ուրիշ երկրների ջերմաստիճանը և նրանցից ավելի լավ իմանալ, թե ե՞րբ պետք է նրանք հեղափոխություն անեն»[11]։

«Էնվեր փաշայի վերջը» հոդվածում Ալ. Մյասնիկյանն այն միտքն էր ընդգծում, որ «մահմեդական Արևելքի և ընչազուրկ Թուրքիայի ազատագրումը գալիս է ոչ թե էնվերներից»[12], այլ այն հեղափոխությունից, «որն այժմ իշխում է Ռուսաստանում և Ասիայի որոշ վայրերում, և որը վաղը կտարածվի աշխարհի մյուս ծայրամասերի վրա»[13]։ Այնուհետև նա եզրակացնում էր. «Էնվերն իր սուրը բարձրացրեց աշխարհի մեծագույն հեղափոխության վրա և ինքն էլ սրից ղոհվեց»[14]։ Ինչպես տեսնում ենք, նույնիսկ այնպիսի լուսավոր մի դեմք, ինչպիսին Ալ. Մյասնիկյանն էր, հեղափոխությունից հինգ տարի հետո էլ փայփայում էր ռուսական հեղափոխությունն ամբողջ աշխարհում տարածելու երազը։

Բարեբախտաբար, կային և այլ գործիչներ, ովքեր իրապաշտորեն դնահատելով ինչպես էնվերյան, այնպես էլ քեմալական շարժումը, զգուշացնում էին, որ չպետք է տարվել Թուրքիայի հեղափոխական գործոնով։ Հայտնի դիվանագետ Յա. Դանեցկին, որպես Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ մասնակցելով Կարսի 1921 թ. կոնֆերանսին, հոկտեմբերի 5-ին Չիչերինին հեռագրում էր հետևյալը. «...Թուրքերի վարքագիծն այնպիսին է, որ ակամայից քեզ հարց ես տալիս. ինչո՞ւ էինք մենք նրանց համար այդքան զոհաբերություններ կատարում»[15]։

Ի՞նչ հետևություններ կարելի է անել բերված փաստերից։ Կարո՞ղ են դրանք արդիական որևէ նշանակություն ունենալ, թե՞ սոսկ անցյալը փորփրելու զուր փորձեր են, ինչպես թվում է որոշ քաղաքագետների։ Կարծում եմ, կարելի է որոշ հետևություններ անել և որոշ դասեր քաղել։

Նախ, բոլշևիկյան ղեկավարները գործել են «նպատակը արդարացնում է միջոցները» դատապարտելի սկզբունքով, որը վնասներ է բերել նաև հայ ժողովրդին։ Եվ ապա՝ խորհենք այսօրվա մասին։ Այսօր գոնե չպետք է թույլ տալ, որ նույն քաղաքականությունը շարունակվի այս կամ այն ձևով։ Վսեմ նպատակի պետք է հասնել ազնիվ եղանակով, քաղաքակիրթ աշխարհում ճանաչում գտած բարոյական սկզբունքների հիման վրա։ Այնուհետև. Հայկական հարցում Թուրքիայի, Արևմուտքի ու Ռուսաստանի վարած քաղաքականությունը վերհանելու հետ մեկտեղ չվախենալ խոսելուց ոչ-շատ հեռավոր և բոլորովին մոտիկ անցյալում մեր քաղաքական բոլոր կուսակցությունների ու պետական գործիչների կողմից թույլ տված բացթողումների ու սխալների մասին, չառաջնորդվել սին պատրանքներով, հաշվի առնել, որ պատմական արդարության սկզբունքը դեռ երկար ժամանակ կարող է չդառնալ գործոն, այն էլ վճռական՝ ազգային-պետական հարցերը լուծելու համար։

---

9 Le congrès de Tours, Paris, 1980, p. 536.

10 Նույն տեղում, էջ 537։

11 Նույն տեղում, էջ 532—533։

12 А. Ф. Мясникян. Избранные произведения. Ереван, 1965. с. 416—417.

13 Նույն տեղում, էջ 417։

14 Նույն տեղում։

15 ՀՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 40/113, ց. 3, դ. 75, թ. 48։

БОЛЬШЕВИКИ И ЭНВЕР-ПАША

Р. Г. СААКЯН

Резюме

В 1919—1920 гг. руководители Комитерна А. Зиновьев, К. Радек и другие пытались прибегнуть к помощи бывших правителей Османской Турции Энвера-паши, Джемаля-паши и других младотурецких лидеров в распространении идей Октябрьской революции на мусульманском Востоке, а также в борьбе Советской России против Антанты.

В частности, Энвер-паша, заочно приговоренный турецким военным трибуналом к смертной казни за совершенные в годы первой мировой войны преступления, в 1920 году приезжал в Москву, где получил за свои «услуги» деньги, золото и драгоценности, большую часть которых он отправил в Берлин и Константинополь другим преступникам—Джемалю, Талаату, доктору Назыму, Бехаэддину Шакиру и т. д. В данном случае большевики действовали по принципу «цель оправдывает средства», попирая элементарные нормы морали, вступив в контакт с палачами.